

Հարց

«Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ԼՂՀ օրենքի համաձայն՝ ո՞ր դեպքում է գերիշխող օպերատորը մերժում նոր օպերատորի դիմումը:

Պատասխան

Գերիշխող օպերատորը, որը տիրապետում է գծի ենթակառուցվածքը, իրավասու է մերժել օպերատորի դիմումը, եթե Կարգավորողին կապացուցի, որ՝

- 1) գծի ենթակառուցվածքը կվնասվի կամ էլեկտրամագնիսական առումով չի համատեղվի գերիշխող օպերատորի ցանցի հետ.
- 2) տվյալ գծի ենթակառուցվածքի թողունակությունն սպառված է կամ կսպառվի դիմումի ամսաթվից հետո՝ երեք տարվա ընթացքում: Սակայն այլ օպերատորի խնդրանքի հիման վրա և հաշվի առնելով տեխնիկական և տնտեսական հնարավորությունները՝ գերիշխող օպերատորը պարտավոր է կառուցել պահանջվող ենթակառուցվածքները: